ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

В статье рассмотрены существующие источники информации о мигрантах, выявлены их недостатки и необходимость обобщенной системы информационных источников миграции. Было предложено ввести цифровую систему миграционных карт в пунктах пересечения границы для сбора информации о мигрантах, соответствующей определениям ООН. Также изучалось влияние различных уровней дохода и занятых работой ниже своей квалификации числа работников на число эмигрантов из Армении.

ASTGHIK HOVHANNISYAN

EMPLOYMENT AND ISSUES OF REGIONAL EMIGRATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *emigration, factors contributing to emigration, qualification relevant work, income level, correlation coefficient, migration card*

The article has examined existing sources of information on migrants, their shortcomings have been revealed and the need for integrated sources of administrative information on migration has been highlighted. A suggestion has been made to invest a digital system of migration cards at border crossing points for getting information on migrants meeting the UN definitions. The impact of the quantity of employed in jobs lower than their qualificationand different levels of income on the number of emigrants from Armenia has also been studied.

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *ՀՆԱ, ազգային տնտեսություն, արտահանում, ներմուծում, զուտ արտահանում, արտահանման հակվածություն, ներմուծման հակվածություն, տնտեսական աճ*

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ՀՆԱ արտաքին առևտրի արդի զարգացումները (արտահանման և ներմուծման արդյունքներով) և համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ) 2011–2016 թթ.: Ինչպես ՀՀ-ի, այնպես էլ ԱՀ-ի համար ՀԱԳ-երը ունեցել են դրական զարգացումներ. ՀՀ-ում 2011 թ. այն կազմել է -0.545, 2016 թ.՝ -0.520, իսկ ԱՀ-ում համապատասխանաբար՝ -0.513 և -0.297: ՀՀ-ի և ԱՀ-ի միջև արտաքին համատեղ առևտրի կառուցվածքում ԱՀ բաժինը արտահանման մեջ կազմել է 2011 թ.՝ 1.6%, ներմուծումը՝ 5.1%, իսկ

2016 թ. համապատասխանաբար՝ 4.3% և 7.3%: Ինտենսիվացել է նաև ՀՀ-ի և ԱՀ-ի միջև արտաքին առևտրաշրջանառությունը՝ ՀՀ-ի հետ արտաքին առևտրաշրջանառություն՝ ԱՀ-ի բաժինը եթե 2001 թ. կազմել է՝ 64.1%, ապա 2016 թ.՝ 88.8%, արտահանումը համապատասխանաբար՝ 37.0% և 83.8%, իսկ ներմուծումը՝ 67.3% և 90.3%: Այսինքն՝ նշված ժամանակահատվածում արտաքին առևտրաշրջանառությունը երկու հանրապետությունների միջև նկատելիորեն ավելացել է: Ինչը նշանակում է, որ նրանց միջև ստեղծվել է արտաքին տնտեսական գործունեության արդյունավետ համակարգ, որը առաջիկա տարիներին անհրաժեշտ է խորացնել և ընդլայնել:

Ինչպես հայտնի է, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի)՝ որպես երկրի տնտեսական հզորության գնահատման հիմնական մակրոտնտեսական ցուցանիշի մեծությունը ծախսային մեթոդով հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՀՆԱ = սպառում + ներդրումներ + պետական գնումներ + զուտ արտահանում:

Բանաձևից հետևում է, որ զուտ արտահանման մեծությունը (որն իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման տարբերությունը) ուղղակիորեն ազդում է ՀՆԱ մեծության վրա, այսինքն՝ եթե այդ տարբերությունը դրական է, ապա ՀՆԱ մեծությունն ավելանում է և ընդհակառակը: Ուստի ցանկացած երկրի համար կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի զուտ արտահանումն ունենա դրական մեծություն, թեև, ինչպես ցույց է տալիս աշխարհի առանձին երկրների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների վերլուծությունը, միշտ չէ, որ հաջողվում է ապահովել արտահանման գերազանցումը ներմուծման նկատմամբ: Ավելին, աշխարհում անհամեմատ քիչ են այն երկրները, որոնց զուտ արտահանման ցուցանիշը դրական մեծություն է:

Յուրաքանչյուր երկիր, որն ընդունում է ազատ շուկայական տնտեսաձևը, առաջին հերթին, պարտավոր է որոշել, թե ինչ ապրանքներով և ծառայություններով կարող է մտնել համաշխարհային շուկա և ընդլայնել իր մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանման գործում, այսինքն՝ առանձնացնել իր տնտեսական հնարավորությունները և արտահանման գերակայությունները: Տարբեր երկրներում արտաքին առևտրի վիճակը բնավ նույնը չէ, սակայն այն երկրներում, որտեղ աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցելու հնարավորություններն օգտագործվում են ավելի ակտիվորեն, որպես կանոն, բարձր են նաև տնտեսական աճի տեմպերը:

Արտաքին առևտրի վերաբերյալ գաղափար կազմելու և ճիշտ մակրոտնտեսական քաղաքականություն ընտրելու նպատակով յուրաքանչյուր պետության համար կարևոր է զուտ արտահանման (արտահանման և ներմուծման ծավալների տարբերության) հաշվառումը: Կարելի է առանձնացնել զուտ արտահանման հաշվառման երկու մոտեցում.

- զուտ արտահանման հաշվարկ՝ ըստ գործընկեր երկրների,
- զուտ արտահանման հաշվարկ՝ ըստ ապրանքային խմբերի:

ՀՀ-ի համար կարելի է առանձնացնել զուտ արտահանման հաշվառման ևս մեկ մոտեցում. զուտ արտահանման հաշվառումն ըստ առանձին մարզերի:

Արտահանման հիմնախնդիրը շարունակաբար գտնվել է ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և խնդիր է դրվել, որպեսզի արտահանման աճի տեմպերը գերազանցեն ներմուծման աճի տեմպերը, այսինքն՝ ներմուծման համեմատությամբ ապահովվի արտահանման առաջանցիկ աճ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության ծրագրում (2017–2022 թթ.) նշվեց. «Առաջիկա հինգ տարվա ընթացքում Հայաստանի տնտեսական աճը հիմնված կլինի տնտեսության ներքին ռեսուրսների արդյունավետ և խելացի օգտագործման ու արտաքին աշխարհում մրցունակության բարձրացման վրա՝ ապահովելով արտահանման ծավալների աստիճանական ավելացումը, ինչը պետք է հանդիսանա տնտեսական աճի առանցքային շարժիչը»[1]:

Զուտ արտահանման բարելավմանն ուղղված ճիշտ մակրոտնտեսական քաղաքականություն վարելու համար հարկավոր է պատկերացում կազմել վերջինիս վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության զուտ արտահանման դինամիկայի ուսումնասիրության նպատակով դիտարկենք ՀՀ ԱՎԾ-ի կողմից հրապարակված պաշտոնական տվյալները ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ 1995–2016 թվականների կտրվածքով: Այդ ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. ***Զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, արտահանման և ներմուծման հակվածությունները և զուտ արտահանման հարաբերակցությունն արտաքին ապրանքաշրջանառությանը ՀՀ-ում 1995–2016 թվականներին***

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2017–2022 թթ.), հաստատվել է ՀՀ կառավարության 2017 թ. հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ:

Եթե ուսումնասիրենք զուտ արտահանման տեսակարար կշռի, արտահանման և ներմուծման հակվածությունների դինամիկան 1995–2016 թվականներին, ապակնկատենք, որ զուտ արտահանման ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին բացասական մեծություն է եղել:

Վերոնշյալ դիտարկումը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ զուտ արտահանումն առաջիկա տարիների ընթացքում կշարունակի մնալ բացասական մեծություն, ուստի հարկավոր են վճռական քայլեր իրավիճակը շտկելու համար:

ՀՀ-ի և ԱՀ-ի միջև կայուն տնտեսական հարաբերությունների ձևավորման կարևոր ուղղություններից մեկը (ներդրումների, աշխատուժի և տեխնոլոգիաների հոսքերից և տեղաշարժերից բացի) արտաքին ապրանքաշրջանառությունն է, որը իրականացվում է առևտուր անող երկրների բացարձակ և համեմատական առավելությունների միջոցով: Ըստ որում, վերջինս հաշվարկվում է համեմատական առավելությունների գործակիցների (ՀԱԳ) միջոցով՝ ըստ արտահանման և արտաքին առևտրաշրջանառության ծավալների հարաբերության՝ համաձայն որի այդ գործակիցները տատանվում են [+1, –1] միջակայքում: ՀԱԳ-երը բնութագրում են ինչպես երկրների մասնագիտացման աստիճանը (որքան դրանք մոտ են +1-ին, այնքան բարձր է երկրների մասնագիտացման աստիճանը, ինչից հետևում է, որ առավել նպատատակահարմար է այդ երկրի հետ առևտուր անել: Իսկ որքան ՀԱԳ-երի մեծությունները մոտ են –1-ին, այնքան ցածր է երկրների մասնագիտացման աստիճանը դրանից բխող հետևանքներով):

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից հետևում է, որ 2016 թ. 2011 թ. համեմատ ՀՀ արտահանումն ավելացել է 133,6%-ով, ներմուծումը՝ 79,4-ով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 86,1%-ով, արտաքին առևտրաշրջանառության մնացորդը (սալդոն)՝ 75,3%-ով, ՀԱԳ-ը՝ 95,4%-ով: Այդ ցուցանիշները ԱՀ-ի համար կազմել են համապատասխանաբար՝ 101,9%, 82,0%, 92,6%, 53,7%, 57,9%: Բերված ցուցանիշները կարելի է բնութագրել որպես դրական:

Աղյուսակ 2-ի տվյալները վկայում են, որ ՀՀ և ԱՀ ընդհանուր ՀՆԱ կազմում ԱՀ բաժինը, 2001 թ. 2,0%-ի փոխարեն, 2016 թ. ամենաբարձրն է՝ 4,3%, ընդ որում, ԱՀ արտահանման բաժինը համապատասխանաբար կազմել է 1,6%,(4,3%), 4,3%, իսկ ներմուծումը՝ 5,1%, (7,3%) 7,3%: 2001–2016 թթ. ընդամենի տվյալներովայդ ցուցանիշները ՀՆԱ-ում կազմել են 3,2%, արտահանումը՝ 4,6%, ներմուծումը՝ 6,2%: 2001–2016 թթ. ԱՀ բաժինը ՀՀ և ԱՀ ՀՆԱ-ում ավելացել է 2,3, արտահանումը՝ 2,7, իսկ ներմուծումը՝ 2,2 տոկոսային կետով, այսինքն՝ ԱՀ արտահանումը 1,2 անգամ գերազանցել է ներմուծումը, ինչը կարելի է բնութագրել որպես դրական միտում:

Բերված փաստերը վկայում են հայկական երկու հանրապետությունների միջև ՀՆԱ և արտաքին առևտրաշրջանառության ինտեգրման խորացման մասին: Այդ մասին են վկայում նաև աղյուսակ 3-ի տվյալները, որոնցից հետևում է, որ ԱՀ բաժինը ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ 2001 թ. 64,1%-ից 2016 թ. կազմել է 88,8% (աճը կազմել է 24,7% տոկոսային կետ):

Աղյուսակ 1

ՀՀ և ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունը և համեմատական առավելությունների գործակիցը 2011–2016 թթ.

	2011		2012		2013		2014		2015		2016	
	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ
Արտահանում, հազ. դոլար	1334338.8	79577.8	1380199.2	57765.7	1478748.6	59636.4	1547286.8	64663.6	1485331.9	62082.2	1782924.7	81106.3
Ներմուծում, հազ. դոլար	4145332.0	313129.1	4261232.7	291246.5	4385865.9	268833.2	4424424.3	301986.9	3239238.7	252474.9	3292425.3	256859.2
Արտաքին առևտրի սալդոն, հազ. դոլար	-233551.3	-2810993	-233480.8	-2881034	-209196.8	-2907117	-237323.3	-2877138	-190392.7	-1753907	-175752.9	-1509501
Արտաքին առևտրաշրջանառությունը, հազ. դոլար	392706.9	5479671	349012.1	5641432	328469.6	5864615	366650.5	5971711	314557.1	4724571	337965.5	5075350
ՀԱԳ	-0.545	-0.513	-0.669	-0.51	-0.637	-0.496	-0.647	-0.482	-0.605	-0.371	-0.520	-0.297

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արտաքին առևտուրը 2001–2016 թթ., մլն ԱՄՆ դոլար

	ՀՀ			ԱՀ			ՀՀ և ԱՀ			ԱՀ բաժինը ընդամենի մեջ, %		
	ՀՆԱ	Արտա-հանում	Ներմու-ծում	ՀՆԱ	Արտա-հանում	Ներմու-ծում	ՀՆԱ	Արտա-հանում	Ներմու-ծում	ՀՆԱ	Արտա-հանում	Ներմու-ծում
2001	2118	341.8	877.4	43.0	5.5	47.2	2161	347.3	924.6	2.0	1.6	5.1
2002	2376	505.2	987.2	46.2	14.1	48.1	2422.2	519.3	1035.3	1.9	2.7	4.6
2003	2807	685.6	1279.5	58.5	29.3	54.3	2865.5	714.9	1333.8	2.0	4.1	4.1
2004	3577	722.9	1350.7	80.3	39.1	76.5	3657.3	762	1427.2	2.2	5.1	5.4
2005	4900	973.9	1801.7	112.3	38.2	94.9	5012.3	1012.1	1896.6	2.2	3.8	5.0
2006	6384	985.1	2191.6	148.7	45.3	113.2	6532.7	1030.4	2304.8	2.3	4.4	4.9
2007	9206	1152.3	3267.8	206.9	72.5	204.8	9412.9	1224.8	3472.6	2.2	5.9	5.9
2008	11662	1057.2	4426.1	284.8	55.1	250.0	11946.8	1112.3	4676.1	2.4	5.0	5.3
2009	8648	710.2	3321.1	281.7	57.3	236.6	8929.7	767.5	3557.7	3.2	7.5	6.7
2010	9260	1041.1	3748.9	316.2	74.8	273.4	9576.2	1115.9	4022.3	3.3	6.7	6.8
2011	10142	1334.3	4145.3	363.8	79.6	313.1	10505.8	1413.9	4458.4	3.5	5.6	7.0
2012	10619	1380.2	4261.2	373.5	57.8	291.2	10992.5	1438	4552.4	3.6	3.9	6.4
2013	11121	1478.7	4385.9	411.5	59.6	268.8	11532.5	1538.3	4654.7	3.6	3.9	5.8
2014	11610	1547.3	4424.4	454.0	64.7	302.0	12064	1612	4726.4	3.8	4.0	6.4
2015	10529	1485.3	3239.2	438.0	62.1	252.5	10967	1547.4	3491.7	4.0	4.0	7.2
2016	10547	1791.7	3273.5	478.0	81.1	256.9	11025	1872.8	3530.4	4.3	4.3	7.3
Ընդամենը	**125506**	**17192.8**	**46981.5**	**4097.4**	**836.1**	**3083.5**	**129603.4**	**18028.9**	**50065**	**3.2**	**4.6**	**6.2**

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ և ԱՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3

ՀՀ և ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունների ինտեգրումը 2001–2016 թթ.

	ՀՀ (մլն դոլար)			ԱՀ (մլն դոլար)			ԱՀ առևտուրը ՀՀ-ի հետ (մլն դոլար)			ԱՀ բաժինը ՀՀ-ի հետ արտաքին առևտրշրջանառության մեջ (%)		
	Արտաքին առևտրա-շրջանա-ռությունը	Արտահա-նում	Ներմու-ծում	Արտաքին առևտրա-շրջանա-ռությունը	Արտա-հանում	Ներմու-ծում	Արտաքին առևտրա-շրջանա-ռությունը	Արտա-հանում	Ներմու-ծում	Արտաքին առևտրա-շրջանա-ռությունը	Արտա-հանում	Ներմու-ծում
2001	1219.2	341.8	877.4	52.7	5.5	47.2	33.8	2.0	31.8	64.1	37.0	67.3
2002	1492.4	505.2	987.2	62.2	14.1	48.1	38.6	3.7	34.9	62.0	26.1	72.5
2003	1965.1	685.6	1279.5	83.6	29.3	54.3	47.3	10.7	36.6	56.5	36.3	67.4
2004	2073.6	722.9	1350.7	115.6	39.1	76.5	91.1	26.7	64.3	78.8	68.4	84.1
2005	2775.6	973.9	1801.7	133.1	38.2	94.9	108.5	25.7	82.8	81.5	67.2	87.3
2006	3176.7	985.1	2191.6	158.5	45.3	113.2	152.6	43.1	109.4	96.3	95.2	96.7
2007	4420.1	1152.3	3267.8	277.3	72.5	204.8	257.7	70.3	187.4	92.9	97.0	91.5
2008	5483.3	1057.2	4426.1	305.1	55.1	250	284.6	49.8	234.8	93.3	90.5	93.9
2009	4031.3	710.2	3321.1	293.9	57.3	236.6	273.0	53.0	219.9	92.9	92.6	92.9
2010	4790.1	1041.1	3749	348.2	74.8	273.4	326.6	69.0	257.6	93.8	92.2	94.2
2011	5479.6	1334.3	4145.3	392.7	79.6	313.1	362.5	71.4	291.2	92.3	89.6	93.0
2012	5694.9	1380.1	4261.2	349	57.8	291.2	317.4	47.1	270.3	90.9	81.4	92.8
2013	5864.6	1478.7	4385.9	328.5	59.6	268.8	305.6	50.7	254.9	93.0	85.0	94.8
2014	5971.7	1547.3	4424.4	366.7	64.7	302.0	338.2	57.1	281.1	92.2	88.2	93.0
2015	4724.5	1485.3	3239.2	314.6	62.1	252.5	293.2	51.1	242.1	93.1	82.2	95.8
2016	5070.2	1796.7	3273.5	338.0	81.1	256.9	300.2	68.0	232.2	88.8	83.8	90.3
Ընդամենը	**64232.9**	**17197.7**	**46981.6**	**3919.7**	**836.1**	**3083.5**	**3530.9**	**699.4**	**2831.3**	**90.0**	**83.6**	**91.8**

Կատարված վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ի և ԱՀ-ի միջև տնտեսական համագործակցության և, մասնավորապես, արտաքին առևտրի զարգացումները 2001–2016 թթ. ընթացել են ճիշտ ուղղությամբ (այսինքն՝ այդ հարաբերություններում ավելացել է ԱՀ կշիռը հատկապես արտահանման գծով): Այնուամենայնիվ, կարծում ենք, որ ՀՀ-ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունը պետք է խորացնել, ավելացնելով նրանց միջև համագործակցության այն ուղիները, որոնք կապահովեն այդ ինտեգրման ավելի բարձր տեմպեր:

АРМЕН МАРКОСЯН

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКОЙ АРЦАХА

Ключевые слова: *ВВП, национальная экономика, экспорт, импорт, чистый экспорт, склонность к экспорту, склонность к импорту, экономический рост*

Автор рассмотрел текущие изменения внешней торговли Республики Армения и Республики Арцах по результатам экспорта и импорта в ВВП, а также коэффициенты сравнительных преимуществ (КСП) за 2011–2016 гг. Как для РА, так и для РА была зафиксирована положительная динамика КСП, в 2011 г. в Армении он составлял -0,545, в 2016 г. - 0,520, а в РА, соответственно, -0,513, -0,297. В структуре совместной внешней торговли между РА и РА доля РА в экспорте составила в 2011г. 1,6% в импорте – 5,1% а в 2016 г., соответственно, 4,3% и 7,3%. Активизировался также внешний торговый оборот между РА и РА, если доля РА во внешнеторговом обороте с РА в 2001 г. составляла 64,1% то уже в 2016 г. – 88,8% экспорт, соответственно, 37,0% и 83,8% а импорт – 67,3% и 90,3%. То есть, за указанный период внешнеторговый оборот между двумя республиками значительно вырос. Что означает, что между ними сформировалась эффективная система экономической деятельности, которую необходимо углубить и расширить вближайшие годы.

ARMEN MARKOSYAN

ECONOMIC ISSUES BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE REPUBLIC OF ARTSAKH

Key words: *GDP, national economy, exports, imports, net exports, propensity to export, propensity to import, economic growth*

The author has studied the current developments of export and import results in the foreign trade of GDP and Comparative Advantage Ratios (UMP) of the Republic of Armenia andNagorno-Karabakh Republic for 2011-2016. For both Armenia and the NKR, the UMPhas had positive developments: in Armenia it was -0,545 in 2011, -0,520 in 2016, and in the NKR accorgindly-0,513 and – 0.297. Export rate in the foreign trade betweenRA and NKRwas 1.6% in 2011, import rate 5.1%, and in 2016 it was accordingly 4.3% and7.3%. The foreign trade turnover between the Republic of Armenia and NKR has also been intensified, in the foreign trade turnover the share of the NKR in Armenian

economy in 2001 was 64.1%, in 2016 - 88.8%, export - 37.0% and 83.8% respectively, and import - 67.3% and 90.3%. In other words, the foreign trade turnover between the two republics has significantly increased over the mentioned period. This means that an effective system of economic activity has been created between them which should deepen and expand in the coming years.

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Ասիստենտ, ՀՊՏՀ

ՀԱՄԱՇԽԱՐԱՅԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *հյուրանոցային ծառայությունների զարգացման միտումներ, զբոսաշրջային այցելություններ, աշխարհագրական ինտեգրում, ռազմավարական ալյանսներ, ծառայությունների գներ*

Հյուրանոցային ծառայությունների շուկան զբոսաշրջային շուկայի կարևորագույն ենթակառուցվածքային տարրերից է: Այն վերակառուցվում է արտաքին և ներքին միջավայրի մի շարք գործոնների ազդեցությամբ: Համաշխարհային հյուրանոցային ծառայությունների շուկային բնորոշ են կառավարման գործընթացների կենտրոնացումը և ինտեգրումը: Այս գործընթացների արդյունքում ձևավորված հյուրանոցային շղթաներն ունեն իրենց ակնհայտ առավելությունները. ամրագրման միասնական համակարգ, միասնական բազա, նորագույն տեխնոլոգիաների հասանելիություն և յուրացման մատչելիություն, ընդհանուր մարքեթինգային քաղաքականություն, տեղեկատվական աջակցություն:

Ներկայումս հյուրանոցային արդյունաբերությունը համաշխարհային տնտեսության ամենահաջող զարգացող ոլորտներից է, որի զարգացման մակարդակն ընդհանուր առմամբ կախված է ինչպես երկրի զբոսաշրջային մուտքերից և պետության տնտեսական քաղաքականությունից, այնպես էլ հենց ոլորտին առնչվող գործունեության առանձնահատկություններից: Ըստ աշխարհում առավել տարածված STR Global ընկերության Census տվյալների բազայի՝ ներկայումս համաշխարհային հյուրանոցային ֆոնդը ներառում է 14,5 մլն հյուրանոցային համարներ և ավելի քան 156000 հյուրանոցներ, իսկ կառուցվող կամ դեռևս պլանավորված զարգացումն ընդգրկում է 1,3 մլն հյուրանոցային համարներ[1]:

Համաշխարհային հյուրանոցային ծառայությունների շուկան վերակառուցվում է արտաքին և ներքին միջավայրի մի շարք գործոնների ազդեցությամբ: Այլ կերպ ասած,

[1] *STR Global Global Hotel Development Pipeline Report update for February 2016* http://www.hotelnewsresource.com/modules.php?pageNum_Listings=0&totalRows_Listings=571&op=modload&name=HNR&file=companyid&coid=11490